ուսումնասէր անձը շարադրած է, և լաւ ներկայացուցած է անով մեր հինակուան հասարակութեան ոմանց Ուսումնարանաց շինութեան վերայ ունեցած խախուտ գաղափարը ։

Պէտրոս Քոչ ծախահարութեամբ ընդունեցաւ հանդիսատեսներէն՝ գրեթէ ամէնքը խոստովանելով թէ արդարև լոկ խօսքով և ոչ արդեամբ կշինուին ու շուտով կխանգարուին ազգին Դպրոցները ․ հանդիսականք գոհ սրտով գնացին իրենց տները և հարկաւ շատերուն հասկանալի եղաւ Դպրոցաց օգուտները ։ Կցանկանք որ Իգտերցւոց ևս հասկանալի լինի Դպրոցին օգուտը ։

Թատրախաղը լմնալէն յետոյ երեկոյեան ժամը 6ին գերասանք ժողովեցան Սիմէօն վարժապետին տանը, որ նոյնպէս նախանձախնդիր է թատրոնի յառաջադիմութեան, և բաժակներ գինւոյ դատարկուեցան բոլոր դերասանաց կենացը ։

Այսպէս ահա, սիրելի ընթերցող, վերջացաւ նոյն օրուան թատրախաղութիւնը, և ես ևս գոհ սրտով և լիայոյս մեր Երևանայ ազգային եղբարց ապագայ յառաջադիմութեանը, վերադարձայ 'ի Ս. Էջմիածին և անհրաժեշտ պարտք համարեցայ անձին՝ այս ազգային հանդէսը և քեզ հաղորդել յուրախակցութիւն և 'ի յարիւնախանձ շարժելու համար ամէնայն Հայարնակ քաղաքաց մեր ազգասէր եղբայրները ։

Ս. Մանուչարեան

Ի Ս. Էջմ-ծին։

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ

Հոգաբարձութիւն Աստրախանայ Հայոց Հոգևոր Դպրոցաց շնորհ ունի խոնարհաբար մատուցանել Խմբագրութեան Արարատ՝ ցուցակս մտից և ծախուց, թուոց Ուսուցչաց և ուսանողաց Հոգևոր Դպրոցաց իւրոց վասն 1869 ամի, առ 'ի հրատարակել միջոցաւ ամսագրոյդ յընդհանուր գիտութիւն բարենախանձ և ուսումնատենչ համազգեաց։

Հոգաբարձուք՝ Յովսէփ ա. Քահանայ Բունիաթեանց

Քրիստափոր Դադաշեանց

Գրիգոր Սողոմոնեանց

Սարգիս Բուրջալեանց

Սիմէօն Պօպովեանց

Յունվար 19.
5ն փետր.
1870 ամի
յԱստրախան.

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ԳՈՒՄԱՐԱՑ ԱՍՏՐԱԽԱՆԱՑ ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑ ԸՆԹԱՑՍ 1869 ԱՄԻ.

Համր.	ՄՈՒՏՔ	Գումար Ռ.	Գումար Կ.
1	Մնացորդք ի 1868 ամէ՝ պատրաստի դրամի.	47	65
	ՄՈՒՏՔ 1869 ԱՄԻ		
2	Ի տոկոսեաց գումարաց Աստրախանայ Ս. Աստուածածնի և Սրբոց Պետրոսի և Պօղոսի եկեղեցեաց՝ ըստ հաւասար մասանց.	1000	
3	Ի կտակակատարէ հանգուցեալ Բուրվառդեանի՝ յԱստրախանայ Աբրահամու Փասյեանց՝ 'ի 1868 ամէ — 160 րուբլի և վասն ամբողջ 1869 ամի — 350 րուբլի. ընդ ամէնն	510	
4	Ի Վաճառմանէ գրեանց.	71	61
5	Ի Թոշակատու աշակերտաց.	102	
6	Գանձանակադրամք	189	3
7	Ընծայաբերութիւնք՝ 1 հատ 5% բիլետ Թագաւորական բանկի 1860 ամի 105,229 համարաւ (*)	1000	
	Պատրաստի դրամք.	28	48
8	Տուգանք 'ի ռոճկաց Ուսուցչաց վասն 'ի բաց թեղեալ դասուց	—	50
9	Պատրաստի դրամք փոխարինեալք 'ի բիլետս Արքունական Գանձարանի (ս'րխ).	500	
10	Տոկոսիք բիլետաց.	79	14
	Ընդամէնն	3528	40

*) 5% բիլետն նուիրեալ է Աստրախանայ բնակիչ Պարոն Կարապետ Ջաքարեան Գալուստեանց։

Համր.	ԾԱԽՔ	Գումար Ր.	Գումար Կ.
1	Ռոճիկք Ուսուցչաց	793	25
2	Ուսումնական պիտոյք	296	35¾
3	Վարձ պահապանաց	204	
4	Տնտեսական պիտոյք՝ հասարակք՝	117	65⅕
	Վառելափայտ	69	35
5	Ի գին բիլետաց Արքունական Գանձարանի՝ հանդերձ տոկոսօք ըստ հաշուոյն	509	18
	Ընդամենն	1989	79¼

ՄՆԱՑՈՐԴՔ ԱՌ 1870 ԱՄՆ

Ա.) 5% բիլետ Թագաւորական բանկի № 105,229. 1000 րուբլի

Բ.) 10 հատ բիլետք արք. գանձարանի (սերիյ) . 500 րուբ.

Գ.) Առ ձեռն պատրաստի դրամք . . . . . 38 ր. 60¾ կ.

Ընդամենն 1538 րուբլի 60¾ կոպ.

ՑՈՒՑԱԿ ԹՈՒՈՑ ՈՒՍՈՒՑՉԱՑ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԱՍՏՐԱԽԱՆԱՅ ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑ. ԿԱԶՄԵԱԼ ԱՌ 1 ՅՈՒՆՎԱՐԻ 1870 ԱՄԻ.

Համար	Ի ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՍ	ԹԻՒ ՈՒՍՈՒՑՉԱՑ	ԹԻՒ ԱՇԱԿԵՐՏԱՑ: ԹՈՇԱԿԱՏՈՒԱՑ	ԹԻՒ ԱՇԱԿԵՐՏԱՑ: ՁՐԻԱՎԱՐԺԻՑ	ԹԻՒ ԱՇԱԿԵՐՏԱՑ: ԱՂՔԱՏ ՁՐԻԱՎԱՐԺԻՑ	ԸՆԴԱՄԵՆՆ ԱՇԱԿԵՐՏՔ
1	Սրբուհւոյ Աստուածամօր աւագ եկեղեցւոյ	2	9	13	15	37
2	Սրբոց Առաքելոց Պետրոսի և Պօղոսի եկեղեցւոյ	2	5	6	26	37
3	Սուրբ Կատարինեայ Կուսի եկեղեցւոյ	2	1	11	23	35
	Ընդամէն	6	15	30	64	109

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ. Թոշակատու աշակերտք հատուցանեն ի տարին 6 ռուբլի։

Ձրիավարժք ստանան ձրիաբար միայն զուսումն։

Աղքատ-ձրիավարժք ստանան ձրիաբար որպէս զուսումն, նոյնպէս և զամենայն ուսումնական պիտոյս։

Իւրաքանչիւր ուսուցիչ ստանայ ի տարին 150 ռուբլի։